

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՔԿ-ՀՐՄԱՇՁԲ-21/1**

ք. Երևան

02.06.2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու) ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Դ.Ա.Ն.ՇԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Դանիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Սպիտակ քաղաքում նոր բնակելի շենքի կառուցման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների կատարման, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 480 օրացուցային օրը:**

1.3.1 Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.3.2 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում.

1.3.2.1 **հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքմանը հաջորդող օրն ընկած ժամանակահատվածը,**

1.3.2.2 **շինարարական աշխատանքների կատարումն անհնարին դառնալու օրվանից մինչև դրանց վերսկսելու օրն ընկած ժամանակահատվածը, որն արձանագրվում է տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպությունների առաջարկության հիման վրա՝ պատասխանաբար ստորաբաժանման կողմից տրված եզրակացությամբ:**

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի

19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն: Ընդ որում՝ վերջին վճարման կատարողականի գումարը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից.

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 574 999 980 (հինգ հարյուր յոթանասունչորս միլիոն ինը հարյուր ինսունինը հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 95 833 330 (ինսունհինգ միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր երեսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.4 Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.5 Կանխավճարի տրամադրման պայմանները և մարումը՝

5.5.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում, որը չի կարող ավել լինել տվյալ տարվա համար հատկացված գումարից:

5.5.2 Կապալառուն կանխավճար ստանալու վերաբերյալ գրությամբ Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի չափի, դրա շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների և ժամկետների, ինչպես նաև՝ ձեռքբերվող նյութերի (սարքերի) վերաբերյալ հիմնավորումներ: Հատկացվող կանխավճարի մարման ժամկետները պետք է համապատասխանեն պայմանագրով սահմանված օրացուցային գրաֆիկով նախատեսված ժամկետներին:

5.5.3 Պատվիրատուն կանխավճար հատկացնում է պատասխանատու ստորաբաժանման եզրակացության հիման վրա:

5.5.4 Ներկայացվող բանկային երաշխիքի գործողության ժամկետը պետք է առնվազն 90 աշխատանքային օրով ավելի լինի Կապալառուի կողմից կանխավճարի գումարի չափով կատարվելիք աշխատանքների ժամկետից:

5.5.5 Կապալառուի կողմից ներկայացվող բանկային երաշխիքում պարտադիր պետք է նշված լինի Պատվիրատուի՝ կանխավճարի շրջանակներում Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ժամկետների խախտման դեպքում տրամադրված կանխավճարի չմարված մասի հետգանձման իրավունքը:

5.5.6 Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց

թողնված օգուտի դիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (480 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, (անհրաժեշտության դեպքում երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները սովյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Հաջորդող տարիների աշխատանքները կիրականացվեն այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030419
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

Ա. Մկրտչյան
(ստորագրություն) Կ.Տ.



ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«Դ.Ա.Ն.ՇԻՆ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Մուրացան տն. 5
«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 220133330344000
ՀՎՀՀ 06805503

Տնօրեն՝



Ա. Դանիելյան
(ստորագրություն) Կ.Տ.

[Handwritten signatures]

[Handwritten signatures]

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Սպիտակ քաղաքում նոր բնակելի շենքի կառուցման աշխատանքների կատարման

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
Քանդման աշխատանքներ					
1	փայտաշեն 1-ին և 2-րդ շենքերի քանդման աշխատանքներ	100մ3	98.10	54,300	5,326,830
Ընդամենը՝ քանդման աշխատանքներ					5,326,830
Հողային աշխատանքներ					
1	3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով	1000 մ3	1.870	275,000	514,250
2	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով	մ3	208.0	2,375	494,000
3	3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով աստիճանների տակ	մ3	1.44	3,000	4,320
4	բնահողի հետլիցք մեխանիզմով	1000 մ3	0.1540	85,000	13,090
5	բնահողի հետլիցք ձեռքով	մ3	18.0	1,000	18,000
6	ավելորդ բնահողի բարձում էքսկավատորով ինքնաթափին	1000 մ3	1.9074	142,500	271,805
7	բնահողի տեղափոխում մինչև 3կմ	տն	2861.10	1,000	2,861,100
Ընդամենը՝ Հողային աշխատանքներ					4,176,565
Հիմքեր					
1	բնահողի տուփանում խճով	100մ2	4.100	95,000	389,500
2	բետոնե նախաշերտի B 7,5 մ.բ100մմ հաստ.	մ3	41.00	36,000	1,476,000
3	Միաձույլ ե/բ հիմնային հեծանների կառուցում B-25 /ՀՀ-1-ՀՀ-9/	մ3	177.56	47,000	8,345,320
4	Ամրան Փ28A500C	տն	0.4492	475,000	213,370
5	Ամրան Փ25A500C	տն	4.560	475,000	2,166,000
6	Ամրան Փ12A500C	տն	1.7781	475,000	844,598
7	Ամրան Փ16A500C	տն	0.4343	475,000	206,293
8	Ամրան Փ18A500C	տն	1.6968	475,000	805,980
9	Ամրան Փ8A240c	տն	5.7677	475,000	2,739,658
10	Ամրան Փ22A500C	տն	0.2936	475,000	139,460
11	Ամրան Փ20A500C	տն	0.4376	475,000	207,860
12	Ամրանային ցանց /Ց-1,Ց -2/ Փ8A240c 100x100	տն	6.1406	590,000	3,622,954
Ընդամենը՝ հիմքեր					21,156,992
Պատեր					
1	բետոնե պատի կառուցում B-12,5 բետոնով 400մմ հաստ.	մ3	135.80	38,000	5,160,400
2	ուղղահայաց ջրամեկուսացում բիտումով 2 անգամ	100մ2	4.43	57,000	252,510
3	Պատերի կառուցում կանոնավոր ձևի տուֆ քարով	մ3	291.00	26,300	7,653,300
4	պատերի հորիզոնական ամրանավորում ցանցով Փ5 Bp-1	կգ	720.0	570	410,400
5	խարսխածողեր Փ10A240c	կգ	520.00	475	247,000
Ընդամենը՝ պատեր					13,723,610
Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ					
1	Միաձույլ ե/բ սյուների /Ս1-Ս10/ կառուցում B -25 բետոնով	մ3	126.60	57,000	7,216,200
2	Ամրան Փ28A500C	տն	0.5450	475,000	258,875
3	Ամրան Փ25A500C	տն	1.2676	475,000	602,110
4	Ամրան Փ22A500C	տն	3.0939	475,000	1,469,603
5	Ամրան Փ20A500C	տն	1.924	475,000	913,900
6	Ամրան Փ18A500C	տն	2.3077	475,000	1,096,158
7	Ամրան Փ10A500C	տն	0.6972	475,000	331,170
8	Ամրան Փ8A240c	տն	3.8678	475,000	1,837,205
9	Պողպ.թերթ b=18մմ	կգ	430.4	625	269,000

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
10	միաձույլ ե/ք հեծանների կառուցում B-25 բետոնով /Հ1-Հ8/	մ3	298.30	72,000	21,477,600
11	Ամրան Փ32A500C	տն	3.0447	475,000	1,446,233
12	Ամրան Փ28A500C	տն	2.9694	475,000	1,410,465
13	Ամրան Փ25A500C	տն	4.3005	475,000	2,042,738
14	Ամրան Փ22A500C	տն	6.7616	475,000	3,211,760
15	Ամրան Փ18A500C	տն	9.6760	475,000	4,596,100
16	Ամրան Փ10A500C	տն	2.2283	475,000	1,058,443
17	Ամրան Փ8A240c	տն	11.392	475,000	5,411,200
18	Ամրան Փ6A240c	տն	0.3629	475,000	172,378
19	միաձույլ ե/ք հեծանների կառուցում B-25 բետոնով /Հ,,Ա,,--Հ,,Ե,,/	մ3	7.800	72,000	561,600
20	Ամրան Փ18A500C	տն	1.020	475,000	484,643
21	Ամրան Փ8A240c	տն	0.3246	475,000	154,185
22	ճակտոնի ե/ք միաձույլ գոտիների կառուցում B-15 բետոնով/Գ-1,Գ-2/	մ3	2.71	47,500	128,725
23	Ամրան Փ12A500C	տն	0.0954	475,000	45,315
24	Ամրան Փ6A240c	տն	0.0185	475,000	8,788
25	ճակտոնի ե/ք միաձույլ բարավորների կառուցում B 15 բետոնով	մ3	1.110	47,500	52,725
26	Ամրան Փ12A500C	տն	0.0584	475,000	27,740
27	Ամրան Փ6A240c	տն	0.008	475,000	3,800
28	միաձույլ ե/ք տեղամասի կառուցում B 15 բետոնով /ՄՏ-1--ՄՏ-7/	մ3	86.84	52,300	4,541,837
29	Ամրան Փ12A500C	տն	8.3206	475,000	3,952,285
30	Ամրան Փ6A240c	տն	1.6881	475,000	801,848
31	միաձույլ ե/ք սալի կառուցում B 20 բետոնով /ՄՍ-1--ՄՍ-7/	մ3	22.84	72,000	1,644,480
32	միաձույլ ե/ք տեղամասի կառուցում B 7,5 խարամաբետոնով	մ3	5.98	43,000	257,140
33	Ամրան Փ12A500C	տն	0.9824	475,000	466,640
34	Ամրան Փ10A500C	տն	0.5440	475,000	258,400
35	Ամրան Փ8A240c	տն	0.7884	475,000	374,490
36	Ամրան Փ6A240c	տն	0.0212	475,000	10,070
37	միաձույլ ե/ք բարձակային սալի կառուցում B 20 բետոնով /ՄՐՍ-1,ՄՐՍ-2/	մ3	29.12	72,000	2,096,640
38	Ամրան Փ12A500C	տն	1.2365	475,000	587,338
39	Ամրան Փ8A240c	տն	1.1234	475,000	533,615
40	Ամրան Փ6A240c	տն	0.0907	475,000	43,083
41	Միաձույլ ե/ք դիաֆրագմաների կառուցում 20սմ հաստ. B-25 /Դ1 - Դ11/	մ3	272.65	72,000	19,630,800
42	Ամրան Փ12A500C	տն	17.9773	475,000	8,539,218
43	Ամրան Փ14A500C	տն	10.7161	475,000	5,090,148
44	Ամրան Փ16A500C	տն	9.6381	475,000	4,578,098
45	Ամրան Փ18A500C	տն	2.8389	475,000	1,348,478
46	Ամրան Փ20A500C	տն	2.7877	475,000	1,324,158
47	Ամրան Փ6A240	տն	0.5438	475,000	258,305
48	Հավաքովի ծածկի սալերի տեղադրում մինչև 10քմ մակ. /տասնց արժեքի /	հատ	328	3,800	1,246,400
49	Հավաքովի ծածկի սալերի արժեքը 5800x1200մմ	մ2	1753.92	9,000	15,785,280
50	Հավաքովի ծածկի սալերի արժեքը 5800x1000մմ	մ2	440.80	9,000	3,967,200
51	Ժապավենաձև հիմքերի կառուցում բետոնով B 7,5 մակնիշի	մ3	1.44	45,000	64,800
52	աստիճանավանդակի միաձույլ ե/ք հեծանների կառուցում B 15մ.բ. /Հ-1,Հ-2/	մ3	6.10	72,000	439,200
53	Ամրան Փ16A500C	տն	0.3870	475,000	183,825
54	Ամրան Փ8A240c	տն	0.1874	475,000	89,015
55	աստիճանավանդակի միաձույլ ե/ք աստիճանաքայլ-աստիճանահարթակների կառուցում B 15 բետոնով	մ3	16.20	72,000	1,166,400
56	Ամրան Փ6A240	տն	0.3404	475,000	161,690
57	Ամրան Փ12A500C	տն	2.6056	475,000	1,237,660
58	Ամրան Փ16A500C	տն	6.5348	475,000	3,104,030
59	խարսխաձող Փ12A500C	տն	0.0116	475,000	5,510
60	Բետոնե աստիճանների կառուցում B 15 մ.բ.	մ3	7.40	72,000	532,800

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
61	խարսխածողեր Φ10A500C	տն	0.086	475,000	40,850
	Ընդամենը՝ Միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ				140,650,382
	Միջնորմներ				
1	միջնորմներ թեթև բետոնե բլոկներով n=20սմ	մ3	92.40	24,500	2,263,800
2	հորիզոնական անցքերի շաղափում պատերում և սյուներում Φ10 L-100մմ	100 հաստ	2.20	9,000	19,800
3	ուղղահայաց անցքերի շաղափում ե/բ առաստաղում Φ10 L-100մմ	100 հաստ	1.60	9,000	14,400
4	միջնորմների ամրանավորում ամրանային ձողերով	տն	0.548	40,000	21,920
5	Ամրան Φ 8A240c /հորիզոնական ձող/	տն	0.2940	475,000	139,650
6	Ամրան Φ 8A240c /ուղղահայաց ձող/	տն	0.2540	475,000	120,650
7	Ամրան Φ 8A240c /խարսխ/	տն	0.0456	475,000	21,660
8	լրացուցիչ ց/ավազյա շաղափ ուղղահայաց ձողերի տեղադրմանը համատեղ	մ3	2.8	36,000	100,800
9	Միաձույլ ե/բ բարավորների կառուցում B 15 բետոնով /200մմ հաստ./	մ3	0.760	40,000	30,400
10	Ամրան Φ12A500C	տն	0.0675	475,000	32,063
11	Ամրան Φ6A240	տն	0.0295	475,000	14,013
12	միջնորմներ թեթև բետոնե բլոկներով n=10սմ	մ3	159.5	33,500	5,343,250
13	հորիզոնական անցքերի շաղափում պատերում և սյուներում Φ10 L-100մմ	100 հաստ	5.70	9,000	51,300
14	ուղղահայաց անցքերի շաղափում ե/բ առաստաղում Φ10 L-100մմ	100 հաստ	7.84	9,000	70,560
15	միջնորմների ամրանավորում ամրանային ձողերով	տն	1.9796	40,000	79,184
16	Ամրան Φ 8A240c /հորիզոնական ձող/	տն	1.0220	475,000	485,450
17	Ամրան Φ 8A240c /ուղղահայաց ձող/	տն	0.9576	475,000	454,860
18	Ամրան Φ 8A240c /խարսխ/	տն	0.1625	475,000	77,188
19	լրացուցիչ ց/ավազյա շաղափ ուղղահայաց ձողերի տեղադրմանը համատեղ	մ3	5.1	36,000	183,600
20	Միաձույլ ե/բ բարավորների կառուցում B 15 բետոնով /100մմ հաստ./	մ3	4.5	40,000	180,000
21	Ամրան Φ12A500C	տն	0.7833	475,000	372,068
22	Ամրան Φ6A240	տն	0.2787	475,000	132,383
	Ընդամենը՝ Միջնորմներ				10,208,997
	Հատակներ				
1	քնահողի տոփանում խճով	100մ2	5.688	100,000	568,800
2	բետոնե նախաշերտի B 7,5 մ.ք100մմ հաստ.	մ3	56.88	38,000	2,161,440
3	թեթև բետոնե նախաշերտ 40մմ հաստ.	100մ2	22.515	160,000	3,602,400
4	Ց/ավազային հարթեց. շերտ 20մմ հաստ.	100մ2	6.719	115,000	772,685
5	հատակի քսուկային ջրամեկուսացում քսանյութով	100մ2	6.719	33,300	223,743
6	Ց/ավազե հարթեց. շերտ 30մմ հաստ.	100մ2	28.203	172,000	4,850,916
7	Հատակի կառուցում լամինատից 10մմ հաստ 33 դասի 5 կայունությամբ /շրիշակով, սպունգով/	մ2	1379.6	5,300	7,311,880
8	հատակներ կերամիկական /խեցեսալե/ սալիկներից սոսնձի վրա 8մմ հաստությամբ	մ2	672.3	7,600	5,109,480
9	հատակներ մամլոգրանիտե /պրեսգրանիտե /սոսնձի վրա 10մմ հաստությամբ	մ2	199.6	8,600	1,716,560
10	շրիշակների կառուցում մամլոգրանիտե սալիկներից 10մմ հաստությամբ, 10սմ բարձր.	100մ2	0.26	900,000	234,000
11	շրիշակների կառուցում կերամիկական /խեցեսալե/ սալիկներից 8մմ հաստությամբ, 10սմ բարձր. խոհանոցում և պատշգամբներում	100մ2	0.428	900,000	385,200
12	շրիշակների կառուցում կերամիկական /խեցեսալե/ սալիկներից 8մմ հաստությամբ, 5սմ բարձրությամբ լոգնոցում	100մ2	0.0576	900,000	51,840
13	աստիճանահարթակների Ց/ավազե հարթեց. շերտ 30մմ հաստ.	100մ2	1.080	225,000	243,000

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
14	աստիճանահարթակների երեսապատում որակյալ մամլոգրանիտե սալիկներից/10մմ հաստությամբ/ չսահող	մ2	108.0	16,000	1,728,000
15	աստիճանների և աստիճանաճակատների երեսապատում որակյալ մամլոգրանիտե սալիկներից/10մմ հաստությամբ/ չսահող	մ2	147.0	16,000	2,352,000
16	աստիճանավանդակի շրիշակների կառուցում մամլոգրանիտե որակյալ սալիկներից 15սմ բարձր., նվազագույնը 10մմ հաստությամբ	100մ2	0.45	2,000,000	900,000
Ընդամենը՝ Հատակներ					32,211,944
Տանիքներ /1,2,3 մասնաշենքեր/					
1	բետոնե պատի և հենարանների կառուցում B-15 բետոնով 400մմ հաստ.	մ3	19.70	57,000	1,122,900
2	տանիքի ց/ա հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ	100մ2	3.439	125,000	429,875
3	գոլորշամեկուսիչ պոլիէթիլենային թաղանթ 1 շերտ	մ2	421.7	280	118,076
4	վերնածածկի ջերմամեկուսացում պարկերով խարամով 42սմ հաստությամբ խտությունը 400 կգ/մ3 ջերմահաղորդականության գործակիցը 0,164տ/մ0/4 /309,5մ2/	մ3	130.0	19,000	2,470,000
5	վերնածածկի ջերմամեկուսացում հանքային բամբակե սալով 190մմ, խտությունը 100 կգ/մ3 ջերմահաղորդականության գործակիցը 0,068 4տ/մ0/4, որն ամրացվում է սինթետիկ կապակցանյութով	մ2	5.2	9,500	49,400
6	վերնածածկի կամրջակի կառուցում խտացված խարամով 370մմ/309,5մ2/	մ3	114.5	19,000	2,175,500
7	կամրջակի խարամաբետոնե հատակ B -7,5մ.ք 100մմ հաստ.	մ3	2.92	42,000	122,640
8	տանիքի փայտանյութի տեղադրում/ծպեղնառոտք,կանգնակ, թեքան,որմնափայտ,տափազերան,տափաստ, կցորդիչ, մարդակ, կապ.ձգան, պիպավահան/ և մշակում հակասեպտիկ նյութով	մ3	21.32	170,000	3,624,400
9	Կավարամածի տեղադրում 50x50մմ կտրվածքի չորսուներով	մ2	952.200	200	190,440
10	կավարամածի փայտանյութի արժեքը	մ3	4.87	175,000	852,250
11	տանիքի տախտականածի տեղադրում 50մմ հաստ.	մ2	243.40	800	194,720
12	տախտականածի փայտանյութի արժեքը	մ3	12.17	170,000	2,068,900
13	ցվիքի հիմնակմախքի պատրաստում չորսուներից	մ3	0.96	170,000	163,200
14	ցվիքի երեսապատում տախտակով 25մմ հաստ.	մ2	145.20	450	65,340
15	ցվիքի փայտանյութի արժեքը	մ3	3.63	170,000	617,100
16	Ջրհորղանի կառուցում գունավոր ց/թիթեղով 0,5մմ	100մ	1.738	220,000	382,360
17	Ջրհորղանի ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	1գմ	173.8	3,400	590,920
18	Ձեղնահարկի լուսամուտի կառուցում	հատ	6	50,000	300,000
19	ձեղնալուսամուտի պատերի երեսապատում գունավոր ց/թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ2	0.16	200,000	32,400
20	ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ2	16.0	3,400	54,400
21	ձեղնահարկի լուսամուտների շերտափեղկի տեղադրում / 6 հատ/	մ2	3.78	14,000	52,920
22	փայտե չորսու	մ3	0.045	175,000	7,875
23	շերտափեղկի տախտակ 100x10մմ	մ3	0.04	175,000	7,000
24	ձխնիներ	հատ	12	700	8,400
25	փայտե էլեմենտների յուղաներկում	մ2	0.14	1,000	140
26	տանիքի սանդուխտների պատրաստում տախտակներից/6 հատ/	մ3	0.384	175,000	67,200
27	սանդուխտների փայտե էլեմենտների մշակում հրակայուն և հակասնկային լուծույթով	մ3	0.77	7,000	5,390
28	Տանիքի ծածկույթի իրականացում պրոֆիլավոր գունավոր ցինկապատ թիթեղով ԿՊ-25-0,5մմ	100մ2	9.522	460,000	4,380,120
29	պիպերի կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ2	0.489	180,000	88,020
30	ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ2	48.9	3,400	166,260

Handwritten signature

NN	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
31	կցորդումների կառուցում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ2	0.574	180,000	103,320
32	ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ2	57.4	3,400	195,160
33	ցվիքի երեսապատում ցինկապատ գունավոր թիթեղով 0,5մմ/առանց թիթեղի արժեքի/	100մ2	1.475	180,000	265,500
34	ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ2	147.5	3,400	501,500
35	Ձազարներ տեղադրում գունավոր Փ150մմ ց/թիթեղից	հատ	22	14,000	308,000
36	Ջրթափ խողովակների տեղադրում գունավոր Փ150մմ ց/թիթեղից	100մ	2.004	220,000	440,880
37	Ծունկերի տեղադրում գունավոր ց/թիթեղից Փ150մմ	հատ	52	2,200	114,400
38	պատերի վրա ծածկույթի կառուցում գունավոր ց/թիթեղով 0,5մմ/հովար/	100մ2	0.0695	180,000	12,510
39	ցինկապատ գունավոր թիթեղի արժեքը	մ2	6.95	3,400	23,630
40	ձնարգելիչներ գունավոր ց/թիթեղով/առանց արժեքի/	100մ2	0.426	35,000	14,910
41	ձնարգելիչների արժեքը գունավոր ց/թիթեղից /2մետրանոց/	հատ	65	7,000	455,000
42	Տանիքի պողպատե պաշտ-պանիչ մետաղական ճաղա-շարի տեղադրում	100 գծմ	1.546	125,000	193,250
43	Ամրան Փ14A500C	տն	0.5612	500,000	280,600
44	Ամրան Փ16A500C	տն	0.29225	500,000	146,125
45	մետաղական ճաղաշարի յուղաներկում երկշերտ	100մ2	0.98	90,000	88,200
46	Կավարամածի մշակում հրակայուն և հակամակային լուծույթով	100մ2 մշակ. մակ.	9.522	30,000	285,660
47	Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն լուծույթով	մ3	38.08	7,000	266,560
48	Շքամուտքի ծածկի ց/ավազե հարթեց. շերտ /20-80/մմ հաստ. թերթությունների ստեղծման համար	100մ2	0.1924	200,000	38,480
49	ջրամեկուսացում 2 շերտ իզոգամով	մ2	19.24	2,000	38,480
